ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում 2017թ-ի հուլիսի 7-ին կնքված ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-2 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի օգոստոսի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ապրանքների մատակարարումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով 10.08.2017թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման համար 2017 թվականին ՀՀ ԿԱ ՊԵԿ արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544-704:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

Համաձայնագիր-1
07.07.17թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-2 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան « 10 » Օգոստոս 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Մանուկյանի մի կողմից, և «Սաքի» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս ընկերության տնօրեն Հ.Կարապետյանի, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 07.07.17թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-2 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 8.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Սահմանել, որ Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գնորդ	**Վաճառող**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Սաքի» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք. Գորիս, Անկախության- 2/31
ՀՀ ֆինանսների նախարարության	«Արարատբանկ» ԲԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900013202016, 900013574018	Հ/Հ 1510019341900100
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 09213482
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի	«Սաքի» ՍՊԸ-ի տնօրեն՝
ժամանակավոր պաշտոնակատար՝	
Վ.Մանուկյան	**Հ.Կարապետյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
Հաստատված է
«07» հուլիսի 2017թ. կնքված
N ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/1-2
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Ապրանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2017թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը	**Ընդամենը Տարի**
2	Դրոշներ	4269							288 000	288 000	288 000	288 000	288 000	**288 000**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

Գնորդ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի
ժամանակավոր պաշտոնակատար՝

Վ.Մանուկյան
(ստորագրություն)
Կ.Տ

Վաճառող
«Սաքի» ՍՊԸ
ք. Գորիս, Անկախության- 2/31
«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/Հ 1510019341900100
ՀՎՀՀ 09213482
«Սաքի» ՍՊԸ-ի տնօրեն՝

Հ.Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ